ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 144/1-ՀՌ «04 08 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 51-րդ կետը և ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետը՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում կատարել հետևյալ փոփոխությունները.

դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Գալստյանին ի պաշտոնե անդամների կազմում ընդգրկել որպես գիտական խորհրդի նախագահ,

նախկին դեկան, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տարիել Ղոչիկյանին ի պաշտոնե անդամների կազմում ընդգրկել որպես Քիմիայի ԳՀ կենտրոնի ղեկավար,

դեկանի տեղակալ-գրասենյակի ղեկավար Հասմիկ Շիլաջյանին ԳԽ կազմում ներառել որպես ի պաշտոնե անդամ,

ընտրովի անդամ Գոհար Շահինյանին ֆիզիոլոգիական արձակուրդ գնալու հիմքով հանել ֆակուլտետի ԳԽ կազմից:

2. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ գիտական քարտուղարին, քիմիայի ֆակուլտետին ու խորհրդի անդամներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հիմք՝ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Գալստյանի 14.07.2025 թ. զեկուցագիրը:

ԵՊՀ ռեկտոր Հ. Վ. Հովհաննիսյան